


ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ»
ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

AEN | Հայկական
Կրթական
Ցանց



www.armedunet.com

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ»

ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք.Երևան

«03» հոկտեմբեր, 2018թ.

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ-ում գրանցված և գործող ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետև՝ կազմակերպություններ) «Եղեգնաձորի կանանց ռեսուրս կենտրոն» հիմնադրամի, «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի, «Միասին հանուն տնտեսական զարգացման» ՀԿ-ի, «Երիտասարդ Տավուշ» ՀԿ-ի, «Կոմպաս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ-ի, «Երիտասարդները հանուն զարգացման» հիմնադրամի ներկայացուցիչներս՝

- կարևորելով ՀՀ-ում կրթության ոլորտի բարեփոխումներն ու զարգացման խնդիրները,
- նպատակ ունենալով տեղական ինքնակառավարման (ՏԻ) մարմինների և պետական կառույցների հետ համագործակցության զարգացման միջոցով բարձրացնել որոշումների կայացման գործընթացներում կազմակերպությունների ներգրավվածության աստիճանը,
- համոզված լինելով, որ այդ մասնակցությունը նպաստելու է կրթության ոլորտի խնդիրների լուծման շուրջ կազմակերպությունների միասնական դիրքորոշման ձևավորմանը,
- շեշտադրելով կրթության ոլորտի հանրային քաղաքականության մշակման, ջատագովման և այդ գործընթացում հանրային մասնակցության ապահովման առաջնահերթությունները,

նպատակահարմար ենք գտնում միանալու «Գործընկերություն հանուն կրթության առաջընթացի» ցանցին:

ՑԱՆՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Խթանել կրթական ոլորտում գործող ՔՀԿ-ների դերը՝ որպես կարևոր դերակատարներ կրթական բարեփոխումների վերաբերյալ քաղաքականությունների մշակման և երկխոսության կայացման գործընթացներում,
- ՀՀ խոշորացված համայնքներում ձևավորել նախնական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) և աշխատաշուկայի (ԱՇ) կապի և հանրակրթական դպրոցներում կարիերային առնչվող խորհրդատվական համակարգի բարելավմանն ուղղված Սոցիալական գործընկերություն,
- Նպաստել ՄԿՈՒ և ԱՇ կապի ամրապնդմանը, համայնքային, մարզային և ազգային մակարդակներում հանրակրթական դպրոցներում կարիերային առնչվող

խորհրդատվության համակարգի բարելավմանն ուղղված երկխոսության ձևավորման միջոցով,

- Նպաստել ՄԿՈԻ ոլորտում սոցիալական գործընկերների և գործատուների նպատակային ու արդյունավետ ներգրավմանն ուղղված մեխանիզմների մշակմանը,
- Աջակցել ՄԿՈԻ հաստատությունների ցանցային համագործակցության ձևավորմանը,
- Աջակցել ՄԿՈԻ հաստատությունների և արտադրական ուսումնական կենտրոնների վրա հիմնված՝ պետություն-մասնավոր գործընկերության հետագա զարգացմանը,
- Աջակցել անձի մասնագիտական կողմնորոշման և կարիերայի կառավարման համակարգի և համապատասխան ծառայությունների մշակմանը,
- Նպաստել հանրակրթական դպրոցներում մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ծառայությունների ներդրմանն ու զարգացմանը,
- Զարգացնել ՏԻ և պետական կառույցների հետ կազմակերպությունների համագործակցությունը՝ ուղղված նորմատիվ իրավական ակտերի փորձաքննության ապահովմանը, մոնիթորինգի, հարցումների, հետազոտությունների իրականացմանը և դրանք ՏԻ մարմիններին և պետական կառույցներին տրամադրմանը,
- Մշակել ՄԿՈԻ ոլորտի բարեփոխումներին ուղղված առաջարկություններ փաթեթներ:

Կողմերը կարող են նաև՝

- ✓ Համատեղ հանդես գալ ծրագրային առաջարկություններով և իրականացնել համատեղ կոնսորցիումային ծրագրեր,
- ✓ Համատեղ իրականացնել Կողմերի մասնագետների ներքին հաղորդակցման զարգացմանն ուղղված հանդիպումներ,
- ✓ Համատեղ իրականացնել հանրային իրազեկման միջոցառումներ, այդ թվում՝ զանգվածային լրատվամիջոցներով,
- ✓ Համագործակցել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ միջոցառումների շրջանակներում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Կողմերը պարտավոր են առաջնորդվել համագործակցության հետևյալ հիմնական սկզբունքներով՝

- ✓ փոխադարձ վստահություն,
- ✓ պատասխանատվություն,
- ✓ փոխըմբռնում և փոխզիջում,
- ✓ թափանցիկություն:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- ❖ Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ:
- ❖ Սույն Հուշագրի ցանկացած փոփոխություն կատարվում է գրավոր և դառնում նրա անբաժանելի մասը:

- ❖ Հուշագիրը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, մյուս Կողմին առնվազն 30 օր առաջ գրավոր տեղեկացնելու պայմանով:
- ❖ Մույն Հուշագրի վերաբերյալ Կողմերի միջև ծագած անհամաձայնություններն ու վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով:
- ❖ Մույն Հուշագիրը կնքվում է վեց բնօրինակից, հայերեն լեզվով, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«ՀԿ Կենտրոն»
քաղաքացիական
հասարակության
զարգացման ՀԿ

«Եղեգնաձորի կանանց
ռեսուրս կենտրոն»
հիմնադրամ

«Միասին հանուն
տնտեսական
զարգացման» ՀԿ

«Երիտասարդ Տավուշ»
ՀԿ

Նախագահ՝
Արփինե Հակոբյան

Տնօրեն՝
Կարինե Մովսիսյան

Նախագահ՝
Աշոտ Ծերունյան

Նախագահ՝
Մանուշ Մարայյան



«Կոմպաս» գիտահետազոտական,
կրթական և խորհրդատվական
կենտրոն ՀԿ

Երիտասարդները հանուն զարգացման՝
հիմնադրամ

Խորհրդի անդամ՝
Հայկարամ Դրմեյան



Կ.Տ.

Տնօրեն՝
Խաչիկ Աբաջյան



Կ.Տ.